Կազմված է 02.12.2019թ.

Բաղկացած է 11 թերթից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

«02» 12 2019 Թ.

N 188-Ա ՀՐԱՄԱՆՈՎ

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ

(ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 08.10.2004թ.
գրանցման համար՝ 222.210.00408
ՀՎՀՀ՝ 02562123
21.12.2009 թ. գրանցված
կանոնադրության թիվ 003.2
փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից
13 12 2019 թ.

աշխատակից՝

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրություն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» (նախկին անվանումը՝ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն) պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

1.2. Կազմակերպությունը վերակազմակերպվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 5-ի ««Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակակություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպելու, «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակակություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի թիվ 689-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1232-ն որոշման համաձայն:

Կազմակերպությունը հանդիսանում է «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (գտնվելու վայրը՝ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դ. Անհաղթի փող. 23, պետական գրանցման համարը՝ 286.210.04494) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

1.3. Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.4. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

1.5. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և իր խնդիրները լուծելու նպատակով առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.6. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.7. Կազմակերպությունը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք: Կազմակերպությունը կարող է ունենալ դրոշմակնիք, իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.8. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի

նախահաշիվ, բանկային հաշիվ:

1.9. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

1.10. Կազմակերպության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

հայերեն կրճատ՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ

2) ռուսերեն լրիվ՝ Государственная некоммерческая организация «Центр аукциона и оценки имущества».

ռուսերեն կրճատ՝ ГНКО «Центр аукциона и оценки имущества».

3) անգլերեն լրիվ՝ "Property Evaluation and Auction Centre" State Non-Commercial Organisation:

անգլերեն կրճատ՝ "Property Evaluation and Auction Centre" SNCO

1.11. Կազմակերպության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ք. Երևան, Զաքիյան 10:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Կազմակերպության գործունեության հիմնական առարկաներն են՝

2.1. պետական սեփականություն հանդիսացող գույքի հաշվառման աշխատանքների իրականացումը,

2.2. պետական սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման աշխատանքների իրականացումը,

2.3. պետական սեփականություն հանդիսացող գույքի պահառության աշխատանքների կազմակերպումը, ներառյալ՝ այդ գույքի տեխնիկական սպասարկման և ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացումը,

2.4. պետական սեփականություն հանդիսացող գույքի և գույքային իրավունքների արժեքի որոշումը (գնահատումը և վերագնահատումը),

2.5. պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի չափագրումը, սպասարկումն ու շահագործումը,

2.6. պետական սեփականություն հանդիսացող գույքի, գույքային իրավունքների, առևտրային կազմակերպություններում ունեցած բաժնեմասերի ու բաժնետոմսերի օտարման և մասնավորեցման հրապարակային սակարկությունների կազմակերպումը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝

3.1. պետական սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ հավաստի

տեղեկությունների (ներառյալ՝ արժեքը) ստացման (հավաքագրման) և պահպանման ապահովումը,

3.2. պետական սեփականություն հանդիսացող գույքի շրջանառության հետ կապված գործարքների արդյունավետության բարձրացումը,

3.3. պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի արդյունավետ շահագործման պայմանների ապահովումը:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

4.1. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) գույքագրում,

2) անշարժ գույքի չափագրում,

3) գույքի արժեքի որոշում,

4) անշարժ գույքի շահագործման և սպասարկման ծառայությունների մատուցում,

5) տեղեկատվության ու խորհրդատվության տրամադրում,

6) գույքի (ներառյալ՝ ապրանքներն ու նյութերը), գույքային իրավունքների, աշխատանքների ու ծառայությունների, արժեթղթերի (ներառյալ՝ բաժնետոմսերը), կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմասերի հրապարակային սակարկությունների կազմակերպում և իրականացում:

4.2. Ձեռնարկատիրական գործունեության տեսակների իրականացան սակագները սահմանվում են կազմակերպության գործադիր մարմնի կողմից:

4.3. Կազմակերպությունն իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության մեջ պայմանագրային հիմունքներով կարող է ներգրավել այլ կազմակերպությունների կամ անհատների:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կազմակերպության գործառույթներն են՝

5.1. կնքում է տարածքի սպասարկման ծառայությունների մատուցման պայմանգրեր վարձակալների և անհատույց օգտագործողների հետ,

5.2. իրականացնում է շենքերի ներքին տարածքների սպասարկման աշխատանքներ, այդ թվում պահակային պահպանություն, վերելակների սպասարկում, աղբահանություն, ընդհանուր օգտագործման տարածքների մաքրության և լուսավորության ապահովում, ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցի կանոնավոր և անխափան աշխատանքի ապահովում, ընդհանուր օգտագործման տարածքների ընթացիկ վերանորոգում և այլ ընթացիկ աշխատանքներ,

5.3. իրականացնում է շենքերի գլխավոր հատակագծով շենքին ամրացված արտաքին տարածքների և շենքերի տանիքների սպասարկում,

5.4. իրականացնում է շենքերի բաշխիչ սահմանազատման գծերից սկսած կոմունիկացիոն (էլեկտրահաղորդակցման, ջրամատակարարման, ջրահեռացման) գծերի սպասարկում,

5.5. իրականացնում է համապատասխան միջոցառումներ շենքերի արդյունավետ սպասարկումը ապահովելու համար, այդ թվում կնքում է համապատասխան պայմանագրեր մասնագիտացված կազմակերպությունների հետ՝ ծառայություններ մատուցելու նպատակով (աղբահանություն, վերելակների տեխնիկական սպասարկում և այլն),

5.6. քննարկում է շենքերի վարձակալների և անհատույց օգտագործողների առաջարկությունները կապված շենքերի արդյունավետ սպասարկման հետ և ներկայացնում առաջարկություններ,

5.7. հսկողություն է իրականացնում պայմանագրերով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման նկատմամբ,

5.8. Լիազորված պետական մարմնին ներկայացնում է հաշվետվություններ պետական գույքի հաշվառման, գույքագրման, մասնավորեցման, ուսումնասիրությունների (տեղազննման եղանակով) արդյունքների և կատարված այլ աշխատանքների վերաբերյալ,

5.9. ընկերությունների պետական բաժնեմասերի տնօրինման շրջանակներում կարող է իրականացնել.

1) պետական բաժնեմասի արդյունավետ տնօրինման վերաբերյալ առաջարկություն-ների ներկայացում,

2) անհրաժեշտ փաթեթների նախագծերի կազմման, գործարար ծրագրերի մշակման, ընկերությունների վերակազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքներ՝ պայմանագրային հիմունքներով,

5.10. մասնակցում է Լիազորված պետական մարմնի տնօրինությանը հանձնվող շենքերի և շինությունների հանձման-ընդունման աշխատանքներին,

5.11. մասնակցում է Լիազորված պետական մարմնի տնօրինությանը հանձնված պետական գույքի կառավարման հետ կապված միջոցառումներին,

5.12. վարում է սպասարկման վճարների գանձման, ինչպես նաև առկա պարտքերի և տուժերի հաշվառում,

5.13. ներկայացնում է առաջարկություններ Լիազորված պետական մարմնի տնօրինությանը հանձնված շենքերի և շինությունների տարածքների արդյունավետ կառավարման, դրանց շահագործման, սպասարկման և պահպանության վերաբերյալ,

5.14. աջակցություն է ցուցաբերում պետական գույքի մասնավորեցման (օտարմանն) գործընթացին, տրամադրում համապատասխան խորհրդատվություն,

5.15. կազմակերպում և իրականացնում է պետական գույքի մասնավորեցման և օտարման

(վաճառքի) աշխատանքները,

5.16. լուծարման հանձնաժողովների որոշմամբ լուծարման գործընթացում գտնվող ընկերությունների պարտատերերի պահանջները բավարարելու համար իրականացնում է այդ ընկերությունների գույքի օտարում,

5.17. կազմակերպում է բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի հավաստագրերի տպագրման աշխատանքներ,

5.18. իրականացնում է մասնավորեցման արդյունքում ընկերությունների, բաժնետերերի և բաժնետոմսերի, ինչպես նաև պետական գույքի մասնավորեցմանը վերաբերող ամփոփ տեղեկատվության հաշվառում և տրամադրում,

5.19. իրականացնում է մեթոդական և մեթոդաբանական բնույթի աջակցություն մասնավորեցման սուբյեկտներին՝ պետական գույքի ձեռք բերման ընթացքում,

5.20. բացում և վարում է պետական գույքի մասնավորեցման և վաճառքի իրականացման նպատակով բանկային հաշիվները,

5.21. իրականացնում է ռիելթորական գործունեություն,

5.22. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ չարգելված ցանկացած տնտեսական այլ գործունեություն,

5.23. իրականացնում է պետական սեփականություն հանդիսացող՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնված շենքերի և շինությունների շահագործման աշխատանքները՝ ներառյալ դրանց սպասարկման պայմանագրերի պայմանների սահմանումը,

5.24. կազմակերպում է պետական սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ օտարման ենթակա շարժական գույքի պահպանությունը, տեխնիկական սպասարկումը ու ընթացիկ վերանորոգումը, ինչպես նաև ապահովում է պատշաճ պայմաններ այդ աշխատանքների իրականացման համար (ներառյալ համապատասխան ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման միջոցով),

5.25. իրականացնում է հրապարակային սակարկությունների (այդ թվում՝ էլեկտրոնային) կազմակերպում և անցկացում,

5.26. իրականացնում է պետական գույքի օտարման, մասնավորեցման, ինչպես նաև վարձակալության տրամադրման նպատակով աճուրդների կազմակերպում, պետական գույքի օտարման, մասնավորեցման, ինչպես նաև վարձակալության տրամադրման գործընթացներին աջակցում:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը, գործադիր մարմինը (գլխավոր տնօրենը):

6.2. Հիմնադրի որոշմամբ կամ Կազմակերպության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև կոլեգիալ կառավարման, խորհրդակցական, վերահսկողություն

իրականացնող և (կամ) այլ մարմինների (խորհուրդ, տնօրենների խորհուրդ, և այլն) ձևավորում:

6.3. Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեության և կառավարման վերաբերյալ ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

6.4. Կազմակերպության ընդհանուր կառավարման և բնականոն գործունեության ապահովման լիազորությունները իրականացնում է Պետական գույքի կառավարման կոմիտեն՝ լիազորված պետական մարմին և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

6.5. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը՝ Կազմակերպության գլխավոր տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված պետական մարմինը:

Կազմակերպության գլխավոր տնօրենը օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով ու սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

6.6. Կազմակերպության գլխավոր տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ատորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

6.7. Կազմակերպության գլխավոր տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական աշխատանքից:

6.8. Կազմակերպության գլխավոր տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպության և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Կազմակերպության գլխավոր տնօրենի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

6.9. Կազմակերպության գլխավոր տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները և դրանց չկատարման համար նա չի կարող ենթարկվել պատասխանատվության:

6.10. Կազմակերպության գլխավոր տնօրենի բացակայության դեպքում լիազորված պետական մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն

իրականացնում է այլ անձ:

6.11. Հիմնադրի լիազորությունները

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) Կազմակերպության հիմնադրումը,

2) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

3) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

4) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

6.12. Լիազորված պետական մարմնի լիազորությունները

Լիազորված պետական մարմնի լիազորություններն են՝

1) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի հաստատումը,

2) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,

3) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

4) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

5) Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորման և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

6) իրականացվում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

7) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

8) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

9) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

10) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

11) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

12) իրականացնում է սույն օրենքով, հիմնադրի որոշումներով և պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

6.13. Գլխավոր տնօրենի լիազորությունները

Կազմակերպության գլխավոր տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

3) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

6) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

7) սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը,

8) հաստատում է Կազմակերպության մասնաճյուղերի կանոնադրությունը,

9) նշանակում է պաշտոնի Կազմակերպության մասնաճյուղերի ղեկավարներին և նրանց տալիս համապատասխան լիազորագրեր,

10) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահման-ներում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՏՆՕՐԻՆՄԱՆ, ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

Հիմնադրման ժամանակ Կազմակերպության հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնվող գույքի չափը սահմանվում է Կազմակերպության հիմնադրման մասին որոշմամբ: Հիմնադրման ժամանակ Կազմակերպության հիմնադիրը չի կարող որպես սեփականություն հանձնել նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկից ավելի արժողությամբ գույք, եթե օրենքով կամ հիմնադրի

որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

7.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

7.3. Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ Կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

7.4. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

7.5. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

7.6. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

7.7. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

7.8. Կազմակերպությունը իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

7.9. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

7.10. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Կազմակերպությունը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, այդ թվում՝ դրամաշնորհից, ինչպես նաև այլ ձևերով հատկացված միջոցներից,

2) միջազգային կազմակերպությունների հետ իրականացված ծրագրերի միջոցներից,
3) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց նվիրատվությունից,
4) բարեգործական նպատակով տրամադրվող միջոցներից,
5) ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտներից,
6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներից:

8.2. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:
Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆՐԱ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության:
9.2. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
9.3. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
9.4. Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:
9.5. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
9.6. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
9.7. Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ГОСУДАРСТВЕННЫЙ КОМИТЕТ ПО УПРАВЛЕНИЮ ГОСУДАРСТВЕННЫМ ИМУЩЕСТВОМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
STATE COMMITTEE OF STATE PROPERTY MANAGEMENT OF REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ